ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.08.2020
345-98

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահ
Տաթևիկ Ռևազյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Ռևազյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 15.04.2020-ի տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն 16.04.2020-ին պատասխան գրությամբ մերժել էր տրամադրել պահանջված տեղեկությունը՝ պատճառաբանելով, թե 2020թ. փետրվարի 3-ից 7-ը Թռիչքային անվտանգության եվրոպական գործակալության և Եվրոպական Միության կողմից անցկացրած գնահատման այցի եզրակացությունը նախնական բնույթ ունի, վերջնական չէ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ամիսներ անց էս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (EASA)՝ ՀՀ Քաղաքացիական ավիացիային առնչվող զեկույցը և/կամ զեկույցի ամբողջական տեքստի հղումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես *էլեկտրոնային եղանակով:*

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան